

ԲԱԺՆԵԳԻՆ

ԵԳԻՊՏՈՍ

Տարեկ. 50 ղր.

վեցամս 25 "

ԱՐՏԱՍԱՀՄԵՆ

Տարեկ. 13 ֆր

վեցամս. 7 "

Ամերիկա

2 Տղ. 30 սենդ

ԿԱՆԻՍԻԿ

Թիւր 1 Ղրշ. ողջ



ՊԱՅՄԱՆՔ

Գրութիւնք ետ

չեն տրուիր:

Ծանուցումներ

մասնաւոր պայ

մաններով:

Հասցէ

DIRAN
PAPA ZIAN
ALEXANDRIE
(EGYPTE)

Թիւր 1 Ղրշ. ողջ

ԶԱՐԲԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԶԱԽԵՇՏԱԿԱՆ

Է. ՏԱՐԻ

ՀՈԿՏ. 8 ՀԻՆԳԵԱԲԹԻ 1903

Թիւ 276

ԱԶԳԱՅԻՆ

ՄԱՀ ՏՕՔԹ. ԽՕՐԱՍԱՆՃԵԱՆԻ

Շաբթուս հասած Պոլսոյ թերթերէն ցաւօր
կը տեղեկանանք թէ, Վսեմ. Տօքթ. Միքայէլ
էֆ. Խօրասանճեան՝ չկրնալով ազատիլ քանի մը
չաքած է ի վեր զինքը տանջող կաթուածի բուռն
հարուածէն, Սեպտ. 29 երեքշաբթի օրը հոգին
աւանդեր է և հետեւալ օրը նմանը շատ քիչ
տեսնուած հանգիստ կատարուեր է յուղարկա-
ւորութիւնը: Ներկայ գտնուեր են ամեն ազգէ
և ամեն դասակարգէ անհամար բողոքութիւն ժո-
ղովրդեան: Մարմինը ամփոփուեր է Շիշլիի դե-
րեզմանատունը յաակապէս պատրաստուած դամ-
բարանին մէջ:

Բոցի ազգային թերթերէ, Պոլսոյ օտար մա-
մուլն ալ միահամուռ ցաւ կը յայտնէ Տօքթ. Խօ-
րասանճի մահուանն առթիւ և ներբողներ կը
նուիրէ. Իզսամ մսիեռանդ թերթին իսկ հետեւալ
տողերը կը գրէ. «Տօքթ. Խօրասանճի էֆէնտի
«Ընտանեկան բժիշկ» տիտղոսին իրաւամբ արժա-
նացած էր, և ամէն սք. առանց զգուշաւորու-
թեան, կրնար այս պատուաւոր մարդուն վստա-
հիլ իր ընտանեկան ամենէն թաքուն գաղտնիք-
ները, այնպէս սր ցարդ շատ քիչ մարդիկ կըր-
ցած են անոր չափ ընդհանուր վստահութիւն
գրաւել»:

Տօքթ. Խօրասանճեան և Պոլսոյ բժիշկնե-
րուն երիցագոյն և ամենէն արժանաւոր ու պատ-
կառելի մէկ անդամն ու իբրեւ Հայ մտքին ու ի-
մացականութեան ամենէն փայլուն արտայայ-
տիչներէն մէկը ըլլալով, իր յիշատակը միշտ սի-
րելի և ակնածելի պիտի մնայ մեր մէջ:

Պարսկահնդկաստանի առաջնորդ Ալիաթեան
Սրբազան մօտերս պիտի այցելէ Հնդկաստան, հո-
գեւորապէս միտիթարեւել իր հնդկաբնակ հօտը,
որ շատ տարիներէ ի վեր Առաջնորդի երես տե-
սած չէ. թէհրանի անդլ. դեսպանը տեղեկացած
ըլլալով Սրբազանին դիտաւորութեան, խոստացեր
է գիւրացնել այս ճամբորդութիւնը, և տեղեկու-
թիւն տուեր է Հնդկաստանի կառավարութեան,
որու կողմէ հեռագրով հարցուեր է թէ Առաջնոր-
դը ե՛րբ պիտի գայ և ո՛ր ճամբով, որպէսզի պատ-
շաճաւոր ընդունելութիւն մը ըլլայ իրեն:

— Պատուելի Թումաեան, Բագրևաշէպի Պատ.
Խմբագրութեան ուղղած նամակաւ կը յայտարա-
րէ թէ, իր ձեռքէն առնուած որբերէն ինը մե-
ծերը Տ. Էգնեան իր գործատան մէջ աշխատ-
ցնելու համար վար դնելով, մնացեալները Կիպ-
րոսի որբանոց ճամբեր է:

Եթէ այս լուրը իրաւ է, Տ. Էգնեան իր
գաղտը կը կորսնցնէ:

ՏԷՐ ԵՒ ՏԻԿԻՆ Լ. ՇԱԳԱՐԵԱՆ

— Պուկարիոյ մէջ գտնուող Պապական թա-
տերախմբի կարող դերակատարներէն Տէր և Տի-
կին Լեոն Շաքարեան այս շաբթու Ազգ. քսանդ-
րիա հասան :

Աչքերնին լոյս տեղւոյս հայ թատրոնի Տ. Տը-
նօրէնին և թատերասիրաց , որոնք Տիկին Մա-
ռիի հիւանդութեանը պատճառաւ ատենէ մը ի
վեր զրկուած էին ներկայացումներէ :

ԱԶՍՏ ԲԵՄ

Արաքս տպարանին տեղափոխութեան պատ-
ճառաւ «Ազատ Բեմ»-ի շաբաթ օրուան թիւը պի-
տի հրատարակուի յառաջիկայ շաբթու մէջ :

Տ. Ս. ԲԻԻՐԱՏ

«Փիլիսիպ»-ի Խմբագիր Տիար Սմբատ Բիւրատ
տեղւոյս ազգային վարժարանին հայերէնի և
թուաբանութեան ուսուցիչ կարգուեցաւ :

Շնորհաւորելով մեր յարգոյ պաշտօնակիցը,
կարողութիւն կը մաղթենք :

Կը լսենք թէ «Փիլիսիպ»-ն ալ պիտի վերսկսի
հրատարակուիլ յառաջիկայ տարեգլխէն սկսեալ,
իբր ամսաթերթ :

Տիար Սարգիս Փափաղեան , որ շարք մը եր-
գիծաբանական յօդուածներովը ծանօթ է Ար-
շալոյսի ընթերցողաց , այս անգամ Ազգ. քսանդ-
րիա փոխադրուած ըլլալով հետեւեալը շրջած է
մեզ , զոր հաճութեամբ կը հրատարակենք :

Ծ Ի Ծ Ա Ղ

ԹԱՂԻ ՄԸ ՇՈՒՐՋԸ Ի ԳԱՀԻՐԷ

Երեկայեան ճաշէն վերջը , սովորութիւն ու-
նիմ քաճէ եղծիսը նստելով սուրճ մը առնել ,
քիչ մ'ալ լրագիր կը կարդամ , եթէ սրճարանի
տնօրէնը քովս կայնելով իր խոշոր քթին շուքը
ընթերցանութեանս արգելք չի տայ , և ահանով
գիշերային ժամերս հեզիկ հեզիկ կը սահեցնեմ ,
ինչպէս հեշտիւ կը սահի նաւակ մը , լուսնի ար-
ծաթ ցուքին տակ ծփացող նիւրի ջուրերուն վը-
րայէն :

Անշուշտ կը ներուի ինձ , երբ թաղի մը պատ-
մութենէն քիչ մ'ալ բանաստեղծութեան մէջ
մտնեմ . . . ամօթ չէ ես՝ եղբայր , ես ալ Մըսե-
րեմեանին պէս ատ ախաէն վարակուած եմ . հի-
մա , չար նախանձէ պաշար չունեցող Մըսերեմ-
եանը պիտի մոլտայ , «սա դերձակը կէնէ բա-
նաստեղծութիւն կը գրէ» ըսելով . ատ ալ իրեն
գիտնալիք բանը չէ :

Վերը պատկերացուցած սրճարանս կը յա-
ճախեն դիւրակեցիկ և պարկեշտ անճնաւորու-
թիւններ , 65էն մինչև 18 տարեկան , այս վեր-
ջիններուն մէջ կան էտիւքսիօնի էթիւտիան ,
ներ , որոնք ուսուցիչ օրիորդներէ . . . կ'ուսա-
նին . . . տիկիները չգիտնալնուն համար(?) , նաև
պարոններ , քօնթեր , տիւքեր և կամ գոռոնա
պօզմասը սխախտներ :

Յաճախորդաց , այս պէս պէսի շարքին մէջ
առօնեակ անուն զուարճախօս և շատ սիրուն մարդ
մը կայ որ ամենուն սիրելի եղած է , կատարեալ
միմօս մ'է , շատ մ'ալ լեզուներու հմուտ է , ինչ-
պէս հայերէն , ֆրանսերէն , անգլիերէն , յու-
նարէն , չինիմաչիներէն , հօթենթերէն , լօնկօ-
պառտերէն , պարսկերէն , Պոլսոյ նշանաւոր ֆօ-
ւիկ դերասան Չոպանեանին պէս «հէս միճանէ
խիւճա թիւճա» գոց գիտէ , ասկէց զատ , երբա-
յեցերէն կը խօսի . սուտ չեմ խօսիր առեպի վա-
նօ . տաճկերէն պովախոր օսմանիէն ալ կարդա-
ցած ըլլալով , այդ լեզուն շատ լաւ կ'արտասա-
նէ (?) . ու վերջապէս խօսքերնիս ամփոփելով ը
սենք թէ , այս մեր մարդուկը Բաբելոնիա շտա-
րակէն վկայեալ մըն է :

Նորին միմօսափայլութիւնը տնյարմար տի-
տղոսներ ալ ունի , որոնք են . «նէզաքէթ թօր-
պասը , լուղէթ տէրեասը , համիլէթ շանթասը ,
մէտէնիլէթ խիւլասա» վերջ ի վերջոյ «սուարէ
պուտալասը» :

Շոշորթափայլ Պէօհրիւճէ խաթունը եկեղեց-
ւոյ թաղին հանրածանօթ պառաւններէն մին է
եւ որ նոյի տապանէն փախած ըլլալու պարծանքն
ալ ունի . անցած իրիկուն թուանը դրամով խաղ
խաղալը արգիւելու համար հոն եկած էր . բայց
թուր բացակայ ըլլալուն՝ եկաւ առօնեակ աղային
հարցուց . — Պօյըդ սիրեմ , նէզաքէթ թօրպա-
սիս , Ստեփանս տեսա՞ր :

—Հա՛ տեոայ, ծարաւցեր էր, ջուր խմելու համար նիւ մուպարէք գնաց, հիմա ուր է նէ կուգայ:

—Վո՛ւյ աշկիւ խաղայ բէք թօհաֆ կըսես, սա նարկիլէն որի՞նն է. քանի մը նէֆէս քաշեր ձգեր է. մինչեւ թոռս գայ նէ՛ պարէ երկու նէֆէս քաշեմ—: Ու կ'ոկսի կլկլակը կռկռացնելով շաղակրատել:

—Մասորաս տարուան պէս պօլութին հիշ տեսած չունէի. կլօխիդ խտար պայ խապախին էրկու քարիմա (1 դրշ.) օխա մը սեմիգօթը մէկ թարիֆա. քա եավրում, ո՛ր մէկը թարիֆ ընեմ. ասանկ պօլ վախիթը չի կարգուիլն ալ քիչ անխելքութին չէ. քա եավրում ինչո՛ւ չես կարգուիր:

—Իշալլահ էյէր ձմեռը կլօխիդ խտար լահաւան ալ պօլ ըլլայ նէ՛ հիշ չեմ կենար կը կարգուիմ,

—Քա հապա հաւոյունին պօլութինը. ամիս մը առաջ տայի Գառնիկը հինգ օխա կար՝ իրեք թարիֆէի տուաւ. իրեն պաճախներուն պէս կարճուկ թօթիկ կլորիկ էր ամմա՛ ըստանպօլինները ո՛ւր էն. լուսահոգի պարոնտոտս՝ քէօռ պալթա մը ունէի անոր կօթին հետը կը չափէր տէ ա՛նանկ կ'առնէր:

—Պէօհրիւճէ խաթուն, ատխըտար հափուճը ի՛նչ ըրիր:

—Մէջէն տաօը հատ թօթիկ կլորիկները դատեցի գօւրօսսօ ըրի, մնացած ծուռիկ մուռիկներն ալ թուռչի դրի:

—Ամմա եարտըն հա՛. Մոերեմեանին բանատեղծութեանը մէջ «սիրոյ քաղցր բորբոքեալ շուրուպը» կարգացած էի ամմա՛ հափուճին քօւրօստոն լսած չէի:

—Քա անանկ ազուր էղաւ քի, մատներս պիլէ պարապար կերայ: Կեհիր թարիֆ ընեմ տէ դուք ալ շինեցէք:

—Հայտէ նայինք:

—Էն առաջ հափուճին տիրիութինը երթալու համար տաք ջուրին մէջը կը ձգես. քիչ մը կենալէն ետքը կը հանես կստիկես, կլոր կլոր իը ճարդես, ետքը անոր ջուրին մէջը խտրարիտ կէօրէ չէքէր կը լեցնես, քանի մը խվամ գալուն պէս հափուճները մէջը կը լեցնես, խվամ մը տա

հա կալուն պէս վար կառնես, կը պաղի Վըլլայ հափուճ քօմքօսթօսի:

Եկեղեցւոյ թաղը «պէքեար տօլմասիի դըրգամպար» մըն է. ամեն ազգէ և ամէն գաւառի օտար ամուրիներ հոն ալ լեցուած են, եթիֆթն ու ճէֆոռը ասոնց ձեռքն է. սօն մօտա ալա առպօ ճէլէպիէները հազած, ալա մօշօն քառքէթները գլուխնին դրած և կէճէլիկին վրայէն կարճ ժաքէթները հազած բրօմնատկընեն երկայն հասակնին ցուցադրելով. անդին անկիւն մը, աղքատ Ղաղարոսին թոռները ալա քօքօլիէն ժաքէթնին առանց համակրելի Տ. Օտեանի հաւանութիւնը առնելու աշխարարարի դարձուցած, ու նարուզոթոնոսորի կուռքին պէս փողոցին անկիւնները կեցած, բաղամու իշուն պէս ալ ականջին տնկած, գլուխնին երեքցնելով անցնող դարձող կանանց սիրաբորբոքատոշոր ախեր կարճակէին: Ասդին ալ 12 տարեկան հայ տղաքներու երամակ մը, շերամի հունտի պէս մայիսին արթննալով, մարտը. . . չեկած՝ աղաղակէին և առէին, մուլա. . . մուլա. . . մուլա:

Ծնողքներ, այս ձայնէն արթնցէք:

ՍՍ.ՈՂԻՍ ՓԱՓԱՋԵԱՆ՝

(Դերձակ)

ԿԱՐԵՒՈՐ ԾԱՆՈՒՅՈՒՄ

Հայ Հողատէրներին եւ Վարժարանների հոգաբարձութիւնների համար.

Յրանսաի Երկրագործական Բարձրագոյն վարժարանէ մը վկայագիր ստացած Հայ մը կը փափաքի Հայ հողատէրի մը կալուածներին մէջ պաշտօնավարելով արդիւնաւորել իր մասնագիտութիւնը: Ուսումնասիրած է Երկրագործութիւնն ընդհանրապէս, իսկ մասնաւորապէս գիւղատնտեսութիւնը: Կարող է նաեւ Թուրքիայէն դուրս Հայ վարժարանի մը մէջ ուսուցչութեան դասեր ըստանձնել, երկրագործական ճիւղերէն զատ, նաեւ ընական պատմութեան, կենդանաբանութեան բուսաբանութեան և երկրաբանութեան:

Դիմել «Արմէնիաի» խմբագրութեան ի Մարտէյլ:

(Սոյն ազգը Եգիպտահայ վարժարանաց Հոգաբարձութեանց ու շաղրութեանը կը յանձնենք. վերոյիշեալ մասնագէտէն կրնան օգտուիլ մեր վարժարանները):

ԶԱՆԱԶԱՆՔ

Մարդկային նոր ձեռքով. — Անգլիական Նոր
կուսակցության կառավարիչը կը հեռագրէ թէ կըղ-
զիին Մարշլանտ երկրին մէջ մարդկային Նոր
ձեռք մը գտնուեցաւ :

Այդ երկրին մէջ ոտքն անգործածելի ան-
դամ մըն է, երկիրը շատ ճանաչուած ըլլալուն
անկարելի է անոր վրայ քալել, մանաւանդ թէ
արեւադարձային տեղատարափներէն յառաջ ե-
կած սղոզումներն անկարելի կընեն նաւակի դոր-
ծածութիւնը: Բնիկները, չուրերուն մէջ գըտ-
նուած ծառերուն վրայ հիւղակներու մէջ կը բը-
նակին: Երկրին այս բնական հանգամանաց պատ-
ճառաւ այդ ցեղը բոլորովին կորսնցուցած է
մարմնոյ ստորին անդամոց գործածութիւնը :
Այդ ձեռքէն մէկ քանիներ կարծր գետնի վրայ
քերուելով քալեցնել ուզուած ատեն շատ ցաւ
զգացին և ոտքերնին արիւնոտեցան: Իրենց
մարմնոյն կերպարանքն ալ շատ տարբեր է սո-
վորականէն: Մարմնոյն կոճղը տարօրինակ զար-
գացած է, մինչ իրենց ազդրերը, սրունքներն
ու ոտքերը չափազանց ճղճիմ են:

Այդ ժողովուրդը կերպարանքով ու վարմուն-
քով կապիկի կը նմանի: Մարդաբանները շատ
հետաքրքրուեցան այս Նորգիւտէն: Անգլիական
կառավարութիւնը որոշեց գիտական մանրամասն
քննութեան մը ենթարկել այդ Նորագիւտ ցե-
ղին մարմնական յատկութիւններն ու ապրելու
եղանակը:

Սեն—Լուիի (Ամերիկա) առուեսահանդէսը
որ յառաջիկայ տարի պիտի բացուի, իր Բաբե-
լոնեան աշտարակը պիտի ունենայ, ինչպէս Բա-
բելոնի արուեստահանդէսն ունեցաւ իր էյֆէլը:
Ամերիկացիք համակ պողպատէ աշտարակ մը կը
շինեն, 350 մեդր բարձրութեամբ և 150 մեդր
տրամագծով: Աշտարակին զագաթը պիտի գըտ-
նուի ընդարձակ սրահ մը, ուր 7000 (եօթ հա-
զար) հոգի հանգիստ պիտի կրնան բազմիլ: Վե-
րելակ հսկայ գործիք մը մէկ անգամէն պիտի
կրնայ 800 հոգի փոխադրել աշտարակին գագա-
թը: Աշտարակին ներքին մասը, գագաթէն մին-

չև ոտորոտը, բխրեղով (պիլլոր) պիտի պտտուի,
որ գոյնզգոյն ճառագայթներ պիտի ցլացնէ:
Մասնաւոր մեքենաներ բիւրեղները պիտի շար-
ժեն, այնպէս որ մարդ ինքզինքը ադամանդի
ահագին զանգուածի մը մէջ պիտի զգայ: Նոյն-
պէս աշտարակին պատուանդանին շուրջը մաս-
նաւոր ծովակ մը պիտի ձեւացնեն, ուր աշխար-
հի ամենէն աներևակայելի ալիքներն յառաջ պի-
տի գան ընդծովեայ մեքենաներու միջոցաւ, աշ-
տարակին զագաթը գտնուողներուն առջև ամե-
հի տեսարան մը պարզելով:

Լարախաղի. — Հարաւային Ֆրանսայի անց-
եալ շաբթուան փոթորիկը շատ հաճելի եղաւ
Դարպ քաղաքի բնակիչներուն: Երբ հետեւ մեծ
քանակութեամբ լորամարգիներ, հովէն քշուե-
լով, թափեցան քաղաքին տուններուն ու պար-
տէշներուն մէջ, եւ մինչեւ իսկ պատահաննե-
րէն ներս սենեակները մտան պատսպարուելու
յուսով: Քաղաքացիք շաբաթ մը լորամարգի կե-
րան ձրիապէս, առանց հրացան մը պարպած ըլ-
լալու, այնքան առատ էր հովէն ու անձրեւէն
քշուող խեղճ թռչուններուն երամը:

Մարաթոնի վերելքները. — «Կօլուա» Բա-
րիլեան աշխարհիկ թերթը կը գրէ. — «Ի մօտոյ
Նորէն պիտի անսնենք ֆրիւնզիներ, (չըջազգեստի
այն բոլորակ ձեւն որ Պօլսոյ մէջ ծանօթ է Մա-
րաթոն անունով): Մեր հանիներուն կենդանագ-
րերը պիտի ժպտին իրենց շրջանակներուն մէջ,
իրենց թռչունահիները տեսնելով իրենց պէս հա-
գած լայն շրջազգեստը պալենաւոր: Ժիշի և ճիշդ
1860ի նորոյթը չէ որ պիտի հաստատուի: Մար-
մինէն բոլորովին հեռի կեցող ֆրիւնզիներ բոլորո-
վին դադարեալ կը մնայ: Նոր դադարին է վա-
րի կողմէն ընդարձակուած շրջազգեստը: Շըր-
ջազգեստին վարի մասը պալենայի թելերով դար-
ձուած, և եզերքներն երկաթի թելերով բըռ-
նուած, նորաձեւ ընդարձակ քեյթիկներուն հետ
ներդաշնակ լայնութիւն մը պիտի կազմէ, պիտի
և սեղմ պահելով հանգերձ կնոջ մէջքն և ի վեր
հանելով անոր բոլոր նըրուութիւնն ու շնորհալի-
ութիւնը:

ՀԱՅԵԼԻ ԵՆԻ ՄԱՆԵԱԼԱՐԸ

Սաար — Էօմրիսն քեօրքիսիս .
 Տօդրուդ — Հազ րսիսն էյիէյէ .
 Գարգալը — Իշկիզարը .
 Նասիհա — Գուրգսան իշկիզար պիւր իյան .
 Իսթիհարը — Էօմիս գօմէսիսին սօն քեօ
 սեօի .
 Բիւմ — Իսպարն գրքը .
 Վիճարս ինսանի — Հէֆիսիսին միւրիս .
 Նասիս օլմազ — Սիսիսիսին պիւր հապ .
 Թիսիս — Ինսանի իշկիզարին իսիս .
 Չարու — Եսանիս մապիգսար .
 Շահիս — Իշիսն եօգսա՝ օլ .
 Սօմ — Հարահիսն սիւրման .
 Բէյիս — Սօմիսն իսթիսին .



ՍԱԼԼԱՆԵՐԵՐԼԱՐ

Թիւրքիս իսթիսինն էնէյ օլմանիստ
 պուրնան կապէթալարտան պիւր գալը՝ բարա-
 սըլը գալէ պիւրնան սալանը եօրլար .

Չալըմադտան գալընան պիւր թագըմ թէն-
 պէլէն պիւրնէ շէյ գօրադմազ իշիսն աղքատա-
 խնամլարն գալըլարն էօնիսնէ՝ սալանը եօր-
 լար .

Փալիթ իթմէյէ եազըն պիւր թագըմ տիւ-
 քեանըլար՝ պիւր ազ տտհա իշէրի աթալըմ տի-
 յէրէք՝ սալանը եօրլար .

«Ախլուիթալար քէսատ կիտէյօր» աէյէն
 պիւր թագըմ աղլաեանլար՝ աղլադմալը մէյհանէ
 թէզկեանլարն էօնիսնէ՝ սալանը եօրլար կիւլէրէք
 էյլէնէրէք սալանը եօրլար .

Տօմլուգ իսթըր իշիսն պիւր գալարա վէ-
 ըիլէն իսթիգրազլար՝ հալատա սալանը եօրլար
 Բիսնօ

Բոժ. — Շու ասիսնէ՝ պէնիմ կիպի՝ իրատը

մէսարիֆինէ գարշըլը գալէ թիւրէմէյէյէ՝ այադ
 իւզէրինտէ տէյիլ՝ օթուրտուգլարն եէրտէ պիւր
 իսիսան կիպի սալանը եօրլար .

Գրալ իյէ Ֆէյիսօմ

Պիւր տէֆա, Պօհէմիս գալը թարաֆընտան
 ֆէյլէսօֆուն պիւրինէ վէրիլէն զիյաֆէթտէ պիւր
 թագըմ սարալ գալընլարն հազըլ պուրնտուգ-
 լարնտան, գրալ՝ պիւր արա ֆէյլէսօֆա սիւլալ
 իտէր քի .

— Շու գալընլարն կիւզէլիլինէ տաիւր էֆ-
 քեանըլը նէ՝ տիւր .

Ֆէյիսօֆ. — Էֆէնտիմ, պու խուսուսա տա-
 իւր պիւր շէյ սէօյլէյէմէմ, չիւնքիւ, պօյալը ըէ-
 սիմէրտէն անլամամ .

Հասիս իյէ սիլէննի

Փալըրին պիւրի զէնկին պիւր հասիսին իսանէ
 գալընտուսն էլէ ալըպ, սատադա իսթէր . հա-
 սիս օ արա իսանէտէն չըգմազ իւզրէ օլմալ տի-
 լէննիլի կէօրտիւքտէ աղլը ալը գալըլ, զիւրա
 մէրգումուն սըֆֆաթը՝ քէնտի սըֆֆաթընա կա-
 յէթ պէնզէր իտի . վէ պիւր գալ բարա սատադա
 վէրէնէք եէրտէ անը թարաիլէ ալարադ սիւլալ
 իտէր .

— Սըֆֆաթըն պիւր այնի պէնիմ սըֆֆաթըմա
 պէնզէյօր . աճապա վաղթըլա վալիտէն պիւրիմ
 էվէ կէլմի՛շմիտիւր .

— Վալլահի անը պիւրմէմ, տէր հազըրնէվապ
 տիլէննի . եալընըլ շուսու էյի պիւրիլիմ քի՝ վաղ
 թըլա բէտէրիմ պուրայա բէք չօգ կէլիպ կիտէր
 իմիլ .

— Մօնէն, պանա պէշ ֆի . էօտիւնն վէր ,
 եալըն էօտէրիմ .

— Էյի սէօյլէեօրսըն ամմա՝ էօտէյէնէինէ
 էմին տէյիլիմ .

— Տուր , օնուն գօլայը վար . չիմտի պանա
 10 ֆի . վէր , կէօրէնէքսին քի՝ պէշինի սանիլէ-
 սինտէ սանա իստէ իտէնէիմ .

ՏԵՂԵԳՆԵՐ

Աժանս Բոժոժիկ եւ Ընկ.

Պրազիլիա

Ազգային վարժարանը վերաբացուեցաւ :
Բեօշէ պումախա ակմբոց մէջ պտըտած զրոյցի մը
նայելով ուսուցչական մարմնոյն մէջ . . . կռիւը
մօտալուտ կերեւի : Ժամկոչին ապսպրուեցաւ մի-
ջամտելու համար կազմ եւ պատրաստ գտնուիլ :

Քարափ

Բարաքուժ ընկերութեան առաջին յանձնա-
կատարին ելբօրօրդին անցեալ հինգշաբթի օրը
մանչ պաւակ մը ունեցաւ, անշուշտ կարգուած
ըլլալուն պատճառաւ : Նոյն օրը ուսրա Ղարա-
լամպօսին 21 օրէ ի վեր կօշօջկաւ նստեցուցած
ժրաջան հաւն տլ 12 վառեակ ունեցաւ :

Բոժ. — Ուրախութեամբ կ'արձանագրենք այս
ծնունդները, որովհետեւ «գաղթականութիւնը ա-
ճելու վրայ է» . . . իր հաւերով ու աքաղաղնե-
րով :

Մէնչիէ

Քիչ շատ պարզացած երիտասարդ պարոն մը
կիրակի առտու խիստ զբաղեալ (մահմուտ) վիճա-
կի մէջ Սանդրուլ եկաւ . . . գիշերային բանքօժ-
շաներով :

Վերջին լուր

Վարժարանին տնօրէնը՝ աշակերտաց պար-
տաճանաչութեան բարի օրինակ հանգիստնալու
համար՝ առտոժ եօթը թիւ «Հայելի» ներուէն փո-
խառժէքը . . . կլլեց :

Ա. Զ. Դ.

Հետեւեալ գիրքերը կը ծախուին Տիար Կա-
րայէս Աստուծոսնորի ֆոյ . Շէրիֆ բաշա

Փիլիկ Աղբօր Հարսիֆը	որշ. ողջ
Այինէի Լեթայիժ, հայաստ եւ	" 1.5 "
թրքաբառ գուարճարչիքներ	4 " "
Գրպանի Երազանան	50 սնդո-
Գագանճ Գօճա, գօմէսի	20 փրյ.
Մանճուպիյէթիկ Միսեաճաթը	20 "

ՏՊԱՐԱՆ

ՀԱՅԵԼԻ

«Հայելի»ի սպարանին մէջ դիւրանաւցելի գնով
կը սպագրուին առեւտրական տներու համար
ամեն յեղուէ՝ Բարիգեան վերջին դրոքեալք հե-
տաքրքրաշարժ, պատկերազարդ եւ գունաւոր փոփ-
րիկ ազդարարութիւններ. կը սպագրուին նաեւ աշ-
ցեմսոս, հասցէտոս, հարսանեկան հրախրագիր
մահազդ, նամակագրութիւն, պահարան, տոմար . եւն,
Ուրիշ ֆաղափներէ եղած յանձնարարութիւն
ալ փութով կը կատարուին :

ՅԱԿՈԲ ԳԱՐԱԿԷՕԶԵՍՆ

Սուգ-էշ-Աթրարին

Կը ծանուցանէ իր յարգոյ յաճախորդաց թե՛
ինչպէս ուրիշ տարիներ, այս տարի եւս յատկապէս
քերէջ տաւ եւ Զինական, Հնդկական եւ Սէյրա-
նի ընտիր եւ հոտաւէս թէյեր, որոնց գործածութիւ-
նը ներկայ եղանակիս մէջ շատ օգտաւար է :

Կը վաճառէ նաեւ մազի համար ընտիր ներ-
կեր ամեն գոյնէ : Գիները յախաւոր :

Զ Ո Ւ Լ Ա Ր Ա Ն

Գ Ր Ի Գ Ո Ր Ռ Ա Ֆ Ա Է Լ Ե Ա Ն

Թիւ 5 Շարա Ապտիւլ-ազիզ, Գահիր-

Կը ձուլէ ամեն յեղուէ սպագրական տներ,
ծաղիկ, անթերիկ եւ կառանքիւր :

Առաջին օրէն իրեն նշանաբան ընտրած է ող-
որթիւն եւ արագութիւն : Իրեն դիմողները միշտ
գոհ մնացած են :

Ա Շ Ո Տ Փ Ա Լ Ա Ե Ա Ն

Տպագրական ամեն տեսակ գործերու կաշու-
նիս, փորագրիչ, թէ տուախի եւ թէ պղինձի վրայ,
կը պատրաստուին նաեւ վաճառականական կնիք-
ներ՝ մետաղէ եւ ֆառլոյն :

Աղեֆսանդրիս, Ծրանֆ փողոց թիւ 22